«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությանը (այսուհետ Կազմակերպություն) դիմել են մի քանի քաղաքացիներ (այսուհետ՝ դիմումատուներ) հայտնելով, որ իրենք սույն թվականի հունվարին ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագիր ներկայացնելու նպատակով դիմել և ստացել են էլեկտրոնային ստորագրություններ, որի ակտիվացման համար յուրաքանչյուրն արդեն իսկ վճարել է 3000 (երեք հազար) ՀՀ դրամ: Սակայն, օրեր անց, դիմումատուները տարբեր լրատվական աղբյուրներից, այդ թվում նաև «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում հրապարակված հայտարարությունից[1] տեղեկացվել են, որ ՀՀ քաղաքացիները 2025 թվականի փետրվարի 1-ից ազատվում են էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար նախատեսված տարեկան 3000 ՀՀ դրամ վճարից:

Դիմումատուները հայտնում են, որ իրենք ջանացել են ազնիվ, կարգապահ ու պարտաճանաչ վարքագիծ դրսևորել օրենքով սահմանված պարտականությունների կատարման հարցում, ուստի 2025 թվականի հունվարին շտապել են ստանալ էլեկտրոնային թվային ստորագրություն, որպեսզի հասցնեն օրենքով սահմանված ժամկետում լրացնել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրերը (որի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է ս.թ. մայիսի 1-ը, իսկ դեռևս ոչ պաշտոնական՝ նոյեմբերի 1-ը):

Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը էլեկտրոնային ստորագրություն ստացած, սակայն ակտիվացման համար 3000 ՀՀ դրամը չվճարած քաղաքացիների էլեկտրոնային ստորագրությունն ակտիվացվելու է ինքնաշխատ եղանակով (այսինքն նրանք ազատվում են այդ պարտադիր վճարից), դիմումատուների մոտ առաջացել է իրենց իրավունքների խախտման և սոցիալական անարդարության զգացողություն, որի կապակցությամբ դիմել են մեր կազմակերպությանը՝ իրենց իրավունքների պաշտպանության խնդրանքով:

Բարձրացված հարցի կապակցությամբ կատարված ուսումնասիրությամբ պարզեցինք, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում հրապարակված հայտարարությունը չի պատասխանում մի շարք հարցերի.

1) արդյո՞ք 2025 թվականի հունվարին կամ դրանից առաջ ՀՀ քաղաքացիների կողմից էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար արդեն իսկ վճարված 3000 ՀՀ դրամ (ներ) ը վերադարձվելու են այդ քաղաքացիներին թե ոչ, եթե այո, ապա ինչպե՞ս,
2) արդյո՞ք ՀՀ բոլոր քաղաքացիներն են ազատվում այդ վճարից ոչ միայն 2025 թվականի, այլ նաև հետագայում յուրաքանչյուր տարի վճարելուց, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչու՞ և ի՞նչ հիմքով:

Երկրորդ հարցի կապակցությամբ ավելի մանրամասն.

Մեզ համար նույնպես պարզ և հստակ չէ, **եթե** 2025թ. փետրվարի 1-ից ՀՀ քաղաքացիներն ազատվելու են իրենց էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար նախատեսված 3000 ՀՀ դրամ վճարելու պարտականությունից և իրենց էլեկտրոնային ստորագրություններն ակտիվանալու են ինքնաշխատ եղանակով, **ապա** դրա համար արդեն իսկ (2025թ. հունվարին և դրանից առաջ՝ օրինակ՝ 2022, 2023, 2024) վճարած քաղաքացիների նկատմամբ այս պայմանը տարածվելու է, թե՝ ոչ, եթե՝ ոչ, ապա ինչու՞, ինչո՞վ է պայմանավորված այդ խտրական կամ տարբերակման մոտեցումն այդ քաղաքացիների նկատմամբ: *Փաստորեն, դե ֆակտո հնարավոր է էլեկտրոնային ստորագրություններն ինքնաշխատ եղանակով ակտիվացնել և դրա կարիքն էլ չի առաջանում դրա համար լրացուցիչ գումար վճարել:*

[1] Document

Ինչպես ամրագրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Ինչպես տեղյակ եք մի քանի տարի է ՀՀ քաղաքացիներն իրենց էլեկտրոնային ստորագրությունները «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կայքում ակտիվացնելու համար յուրաքանչյուր տարի վճարում են 3000 ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ քարտը ՀՀ քաղաքացուն տրամադրվում է 10 (տասը) տարի ժամկետով, և քաղաքացին ստիպված է լինում յուրաքանչյուր տարի վճարել 3000 ՀՀ դրամ իր էլեկտրոնային ստորագրությունն ամեն տարի ակտիվացնելու համար: Ստացվում է, որ որոշ խմբի ՀՀ քաղաքացիների համար նույնականացման քարտն արժենում է կամ արժեցել է 33,000 ՀՀ դրամ (ներառյալ 3000 ՀՀ դրամ ն/ք ստանալու համար), դեռ սարքի արժեքը չհաշված (6000 ՀՀ դրամ):

Ավելին, հարկ է նկատել նաև, որ ***«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝*** *«Հավատարմագրված հավաստագրման կենտրոններն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ ժամանակավորապես կասեցնելու էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողությունը՝ «բ» ստորագրող անձի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված վճարը[2] սահմանված ժամկետում չվճարելու դեպքում: ... Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողությունը կասեցվում է մինչև ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված վճարի կատարումը:»:*

Փաստորեն, 2025 թվականի փետրվարի 1-ից էլեկտրոնային ստորագրությունների ակտիվացման համար 3000 ՀՀ դրամ վճարելուց ազատվելու հիմքը ոչ թե ՕՐԵՆՔՆ է, այլ ՀՀ կառավարության նիստի ժամանակ հնչեցված և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի հայտարարությունը: Ինչպես տեսնում եք այդ հայտարարությունն ուղղակիորեն հակասում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջին, քանի դեռ ՕՐԵՆՔԻ պահանջը շարունակում է մնալ գործողության մեջ, իսկ օրենքն ավելի բարձր իրավական ուժով է օժտված, քան որևէ հայտարարություն:

Բացի այդ, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կայքում հրապարակված էլեկտրոնային ստորագրության սպասարկման ծառայությունների մատուցման թիվ 2016.06.15 հրապարակային պայմանագրով[3] (4.7-րդ կետ) նախատեսված է հաջորդ տարիների համար գերավճարից կանխավճարի գանձման հնարավորություն, ուստի անհրաժեշտ է, որպեսզի այդ պայմանագիրը վերանայվի և սահմանվի նաև կանխավճարի վերադարձի պայմանի հնարավորություն:

Միևնույն ժամանակ, իրավական ակտով պետք է անդրադարձ կատարվի նաև նախորդ տարիներին ՀՀ քաղաքացիների կողմից իրենց էլեկտրոնային ստորագրությունների ակտիվացման համար վճարված 3000 ՀՀ դրամը (ները) վերադարձնելու և դրանց ժամկետը 2025 թվականի ընթացքում լրանալու դեպքում ևս ինքնաշխատ եղանակով ակտիվանալու հնարավորության հարցին կամ նրանց կողմից արդեն իսկ վճարված 3000 ՀՀ դրամ (ներ)ը ճանաչվեն որպես գերավճար:

---

[2] 3000 ՀՀ դրամը:

[3] E-signature Public Contract-updated 2016-v4-11.05.2016

Այլապես ստացվում է, որ ՀՀ կառավարությունն այսօր այդ խմբի քաղաքացիների նկատմամբ, որոնք արդեն իսկ վճարել են և մի քանի տարի է վճարում են այդ 3000 ՀՀ դրամը (ներ)ը, անհավասար և խտրական մոտեցում է ցուցաբերում: Հուսով ենք, որ այս մասով ՀՀ կառավարությունը հանդես կգա օրենսդրական նախաձեռնությամբ և սեղմ ժամկետներում ՀՀ Ազգային ժողով կներկայացնի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում (կվերախմբագրվի Օրենքի 16-րդ հոդվածը) լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով նաև մեր կողմից բարձրացված դիտարկումները: *Օրինակ՝ վերադարձի մեկ պայման՝ այդ վճարված 3000 ՀՀ դրամները կարելի է քաղաքացիներին վերադարձնել միայն այն դեպքում, երբ կլրանա նրանց նույնականացման քարտի գործողության ժամկետը և նրանք դիմում կներկայացնեն նոր նույնականացման քարտ ստանալու համար, այդ ժամանակ ՀՀ լիազոր մարմինը կարող է կատարել հաշվանցում: Բայց այս պայմանը պետք է ամրագրվի կամ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով, որպեսզի քաղաքացին իրեն երաշխավորված զգա, որ պետությունը կվերադարձնի իր գումարը թեկուզ այդ եղանակով:*

Ըստ իս, պետք է ընդունել այնպիսի իրավական ակտ կամ իրավակարգավորում, որը կապահովվի դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը, կլինի բոլորի համար միատեսակ: Ինչպես ամրագրված է ***«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:***

Այսպիսով, ՀՀ օրենսդիրն ու գործադիրը նորմատիվ իրավական ակտերով պետք է հստակեցնեն հետևյալ հարցերի պատասխանները, որոնց վերաբերյալ մինչ օրս չկա որևէ նորմատիվ իրավական ակտ, այդ հարցերն են՝

1) Արդյո՞ք նախատեսվում է ՀՀ քաղաքացիներին վերադարձնել 2025 թվականի հունվարին էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար իրենց կողմից արդեն իսկ վճարված 3000 ՀՀ դրամը (ներ), թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչու՞, իսկ եթե այո, ապա ի՞նչ եղանակով, արդյո՞ք այն կդիտարկվի կանխավճար՝ հաջորդ տարի նույն ծառայությունների դիմաց անակցեպտ կգանձվի *կամ* այլ տարբերակով, օրինակ՝ առհասարակ վերացվում է էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար սահմանված պարտադիր վճարը և ուղիղ կվերադարձվի նրանց:
2) Ի՞նչ պայման է գործելու այն ՀՀ քաղաքացիների նկատմամբ, որոնք էլեկտրոնային թվային ստորագրություն են սատցել նախքան 2025 թվականի հունվարը և նրանց էլեկտրոնային ստորագրության ակտիվացման ժամկետը լրանում է 2025 թվականի ընթացքում: Արդյո՞ք այդ անձինք նույնպես ազատվում են 2025 թվականին էլեկտրոնային ստորագրության ակտիվացման համար 3000 ՀՀ դրամ տարեկան վճարից, և նրանց էլեկտրոնային ստորագրությունները նույնպես 2025 թվականի ընթացքում ինքնաշխատ եղանակով կակտիվանան:
3) Արդյո՞ք 2025 թվականի փետրվարի 1-ից բոլոր ՀՀ քաղաքացիներն են ազատվում իրենց էլեկտրոնային ստորագրություններն ակտիվացնելու համար սահմանված 3000 ՀՀ դրամ պարտադիր վճարից և այն դառնում է անվճար, և որպես անձի իրավական վիճակը բարելավող նորմ՝ հետադարձ ուժ կտրվի դրան:

4) Հաշվի առնելով բարձրացված հարցերի կարևորությունն ու հանրային նշանակությունը այս հարցերը պետք է քննարկվեն ՀՀ կառավարության նիստի ժամանակ, և ուղիղ հանձնարարականներ տրվի ՀՀ լիազոր մարմնին (ՀՀ արդարադատության նախարարին) նորմատիվ իրավական ակտերի նախագծեր մշակելու և ՀՀ կառավարության հաստատմանը, այնուհետև՝ Ազգային ժողովի ընդունմանը ներկայացնելու նպատակով:

Այսպիսով, վերը թվարկված հարցերը ՀՀ կառավարության նիստերի օրակարգում ներառելու և դրանց իրավական լուծումներ տալու գործընթացում ակնկալում եմ ստանալ Ձեր գործուն միջամտությունն ու աջակցությունը:

«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն